

ԿՈՄԻՏԱՍԱՎԱՐԴԱՊԵՏԸՆ «ԲԱԶՄԱՎԵՊ»Ի ԷԶԵՐՈՒՄ

Ժամանակի մէջ փոխուել է վենետիկի Սուրբ Ղազար կըղ-
զում հիմնադրուած հայագիտական ամենաերկարակեաց ամսագ-
րի՝ «Բազմավէպ»ի կառուցուածքն ու բնոյթը (ակզբում օրագիր,
յետոյ հանդէս, պաշտօնաթերթ), բայց ոչ առաքելութիւնը: Իր
բնոյթն էլ, ինչպէս Հայկագեան բառարանն է բացատրում պիտի
լինէր բազում, բազմապատում:

«Բազմավէպ»ում զետեղուած խօսուն խորագրերը. «Սուրբ
գրային, իմաստասիրական, վարքագրական, հնախօսական, ծիսագի-
տական, գեղեցկագիտական», պապացոյցն են այն անչափելի լուսա-
ւորական եւ ազգանուէր գործունէութեան, որն արդէն 175 տա-
րի ծաւալում է «Բազմավէպ»ը: Մենք մանրամասն չենք ներկա-
յացնի «Բազմավէպ»ի պատմութիւնը, որ Հայոց հոգեւոր Հայրե-
նիքը պահպանելու, ազգային բարձր գաղափարներ տարածելու
առհաւատչեայ է:

Այսօր էլ պարբերականը ներկայանում է արժէքաւոր հրա-
պարակումներով՝ ծանրակշիռ տեղ յատկացնելով նաեւ հայ գե-
ղարուեստի հարցերին: Ամսագրի մեծարժէք նիւթերից են հայ
եւ համաշխարհային երաժշտութեան հիմնախնդիրները լուսաբա-
նող յօդուածները: Առանձնակի կարեւորութիւն են ներկայաց-
նում հայոց երաժշտական միջնադարագիտութեանը, հայկական
խազերի ուսումնասիրութեանը, երաժշտական գեղագիտութեանը
նուիրուած հայ եւ օտարազգի երաժշտագիտների յօդուածները:
Հայ երաժշտութեան նշուած ոլորտները լուսաբանող, գրեթէ,
բոլոր հրապարակումներում արծարծւում է Կոմիտաս Վարդապե-
տի անունը նրա երաժշտա-տեսական գաղափարները: Միջնադր-
ագիտութեան ականաւոր ներկայացուցիչ նիկողայոս Թահմի-

1 Նոր բառգիրք Հայկագեան լեզուի, Խ. 1, Երևան 1979, էջ 416:

գեանը «Բազմավէպ»ի իր՝ հերթական յօդուածի էջերում², հնարաւոր ամողջութեամբ, տեսակների դասդասմամբ, ներկայացնում է պարբերականի՝ երաժշտարուեստին նուիրուած հրապարակումները, մասնաւորապէս Մխիթարեան հայրերի ներդրումը, որ իւրայստուկ կամուրջ է հայ եւ եւրոպական մակոյթների միջնեւ: Մխիթարեան միաբանութեան երեւելի հայրերը Եւրոպական չափանիշների հասցըցին ու տարածեցին հայագիտութիւնն ու հայոց մշակոյթը՝ գիրն ու գրականութիւնը, դաւանանքը, ծէսն ու պատմութիւնը:

Դեռեւս իջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում ուսանելու տարիներին, կոմիտասը քաջատեղեակ էր Մխիթարեան միաբանութեան գործունէութեանը, հաւաստի տեղեկութիւններ ունէր Մատենադարանի խազաւոր ձեռագրերի հարուստ հաւաքածուի եւ տպարանի հրապարակումների մասին: Վարդապետը ծանօթ էր «Բազմավէպ»ի հիմնադիր-խմբագիր, Գէորգեան ճեմարանի երեսմի տեսուչ՝ Հ. Գաբրիէլ Այվազովսկու պատմաբանասիրական աշխատութիւններին³:

Ցայտնի է, որ Կոմիտասի ստեղծագործական եւ գիտական ժառանգութիւնն ըստ արժանւոյն լուսաբանում էր ժամանակի պարբերականներում, եւ անուրանալի է, որ կոմիտասսագիտութեան արդի փուլում այդ հրապարակումները վաւերաթղթի արժեք ունեն: «Բազմավէպ»ը անմասն չէր կարող մնալ Կոմիտասի երաժշտա-լրուսաւորական գործունէութեանը:

Աւելին, Կոմիտասի գիտական կենսագրութեան բազմաթիւ արժէքաւոր էջեր կապուած են «Բազմավէպ»ի հետ, եւ այսօր մենք կարող ենք արձանագրել այն իրողութիւնը, որ ամսագրի տարբեր տարիների հրապարակումներում Մեծ երաժշտի կեանքի ու գործունէութեան վերաբերեալ՝ դեռ լիովին չլուսաբանուած նիւթ է գոյացել: «Բազմավէպ»ում են հրապարակած Կոմիտաս Վարդապետի 100ամեակին նուիրուած Յիշիլիա Բրուտեանի ծաւալուն յօդուածը⁴:

Արփի Վարդումեանի «Խորիրդածութիւններ Կոմիտաս Վարդապետի բեռլինեան աւարտանատի շուրջ» յօդուածը⁵:

2 «Բազմավէպ», ՃՄԴ(1996), թիւ 1-4, էջ 174-175:

3 Այվազովսկին Գէորգեան ճեմարանի տեսուչ է եղել 1874-1876 թթ.:

4 «Բազմավէպ», 1969, № 11-12, 278-238:

5 «Բազմավէպ», 2002, № 1-4, 336-358:

Երաժշտագէտների տարբեր սերունդների արժանաւոր ներկայացուցիչներ Աննա Բարսամեանի, Նիկողոս Թահմիղեանի, Աննա Արեւշատեանի, Ալեքսանդր Սիրանոսեանի, Աննա Ասատրեանի, Արուսեակ Թամրագեանի, Ջուզեպէ Մունարինիի յօդուածները, ինչպէս նաև Կոմիտասին նուիրուած Արսէն Երկաթի, Վահան Շահպաղի, Մարի Աթմաճեանի «Բազմավէպ»ի տարբեր տարիների համարներում հրապարակուած բանաստեղծութիւնները⁶:

Անշուշտ, մէկ յօդուածի սահմաններում անհնար է դիտարկել բոլոր յօդուածներն ու տալ սպառիչ եզրայանգումները: Կը փորձենք առանձնացնել Կոմիտասի մասին առաւել կարեւոր փաստեր պարունակող հրապարակումները:

1907ին Փարիզում, Ցիւրիխում, Լոզանում ունեցած համերգային եւ երաժշտագիտական աննախադէպ յաջողութիւններից յետոյ, Կոմիտաս Վարդապետը 1907 Յունիսի 12ին Արշակ Չռպանեանի հետ մեկնում է Իտալիա: Յուլիսի 30ին Միխթարեան միաբանութեան Գրադարանի դաշլիճում Հ. Իգնատիոս արք Կիւրեղեան Աբբահօր նախագահութեամբ տեղի է ունենում Կոմիտաս Վարդապետի հետ հանդիպման երեկոն: Վարդապետը հանդէս է գալիս ելոյթ-դասսախոսութեամբ՝ միաբանութեան անդամներին ծանօթացնում իր կատարած ստեղծագործական եւ հայ ժողովրդական եւ հոգեւոր երաժշտութեան տեսակներին վերաբերող տեսական աշխատութիւններին: Միխթարեան Միաբանութեան դահլիճում սուլած Կոմիտաս Վարդապետի ելոյթ-դասսախոսութեանն առաջինը արձագանքում է «Բազմավէպ»ը: Նոյն թուականի Օգոստոսին, Կոմիտաս Վարդապետը կրկնում է իր համերգը Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանում: Լեփ-լեցուն Փառաւոր «Հայելիների» դահլիճում Վարդապետը հնեցնում է հայ գեղջուկ երգը, որպէս ազգային գեղարուեստական մտածողութեան եւ ինքնատիպութեան առհաւատչեայ: «Բազմավէպ»ի 1907ի 7-8րդ համարում հրապարակում է Միխթարեան միաբանութեան անդամ, պատմաբան, բիւզանդագէտ, այդ շրջանում խմբագիր Հայր Կարապետ Տէր-Սահակեանի «Հայկական երաժշտութիւնն ի Վենետիկ» յօդուածը, որ լուսաբանում է Կոմիտաս Վարդապետի Մ. Ղազարի մայրավահանքում եւ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանում սուլած նուագահանդէսն ու բանախօսութիւնը՝ հայ գեղարուեստի յաղթանակը:

6 «Բազմավէպ», ՂԴ(1936), թիւ 1-2, էջ 34: «Բազմավէպ», ՂԶ(1938), թիւ 3-4, էջ 140: «Բազմավէպ», ՃՁԱ(1953), թիւ 1-3, 38-40:

Տէր-Սահակեանի պերճախօս ու սրտաբուխ խօսքը ներկայացնում է Կոմիտասի միջոցով Վենետիկի լուսաւոր վանքը հասած հայոց երգի երկնային խորութիւնն ու ինքնատիպութիւնը, բանաստեղծական գեղեցկութիւնն ու դիւցազնական վեհութիւնը։ Վարդապետի արուեստի մէջ յառնում էր Հայաստան-դրախտավայրն ու հայ ժողովուրդը. «Հայ ժողովուրդը՝ այդ ամբոխը աշխատող եւ անկեղծ էակներու՝ կը քուէր Կոմիտաս Վ. ի հետ Ս. Ղազար եկած ըլալ. բայց եկած էր ան իր հետ քերելով հարսանելան իր գերից կագոյն երգերը, հօտաղներու ազատ աղաղակները, պանդուխտներու հառաջանեմերը»⁷:

Հայր Կարապետ Տէր-Սահակեանը կարեւորում է Կոմիտաս Վարդապետի հայոց երաժշտութեան ինքնուրոյնութիւնը բացայատող դրոյթները, եւրոպական երաժշտութեան հետ կատարած գեղջուկ երգերի համեմատական վերլուծութիւնները։ Կոմիտասեան հպանցիկ ասուած, սակայն ուսումնասիրման կարօտ տեսակտների ենք հանդիպում «Բազմավիպ»ի այս յօդուածում. առ այն, որ Կոմիտաս Վարդապետը «Հարսանելան երգերը», առհասարակ հարսանեկան ծէսը կոչում էր «մի ամբողջական օպերայ» կամ վերլուծում էր «ազգային» կոչուած երգերի մեղեդիները։ Հ. Կարապետ Տէր-Սահակեանն իր յետագայ շարադրանքում, Վարդապետին՝ իբրեւ դարաւոր ժառանգութեան մեկնիչ, համեմատում է Խորենացու հետ։

Կոմիտաս Վարդապետի անձն ու գործը լուսաբանող մասնագիտական արժէքաւոր, եւ առաւել մանրամասն դիտարկման արժանի աշխատութիւններից է Մխիթարեան միաբանութեան անդամ, երաժշտագէտ, շարականագէտ, «Բազմավիպ»ի խմբագիր Հ. Ղեւոնդ Տայեանի յօդուածները։ Հայր Տայեանն իր ամբողջ կեանքը նուիրել էր հայ եկեղեցական երաժշտութեան խորազնին ուսումնասիրմանը։ Օժտուած ձայնական հարուստ տուեաններով Տայեանը գրաւել է Ս. Ղազարի Աբբահայր Կոմիտասի համերգին նախագահող ու Հիացող, երաժշտագէտ իգնատիս արք. Կիւրեղենինի ուշադրութիւնը։ 1916ին՝ 25 տարուայ ջանադիր աշխատանքներից յետոյ, յօրինելով քառորդաձայն նոտանների նոր համակարգ, Հայր Տայեանը եւրոպական ձայնագրութեան է վերածել Շարակնոցը, Տաղարանն ու Մաշտոցը։ Զայնանիշների նոր համակարգը կոչուեց «Sistema Dayan» անունով։ Նորայայտ ձայնա-

7 Տէր-ՍԱՀԱԿԵԱՆԸ, Հ. Կ., Հայկական երաժշտութիւնն ի Վեմետիկ, «Բազմավիպ», ԿԵ(1907), թիւ 7-8, էջ 369-373։

նիշների բացատրութիւնը հեղինակը տալիս էր հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով առանձին ուսումնասիրութեամբ⁸:

Հայր Տայեանը «Բազմավէպ»ի էջերում բազմիցս հանդէս է եկել հայկական խազերի ուսումնասիրութեանը նուիրուած յօդուածներով: 1933ին լոյս է տեսել Հ. Դ. Տայեանի «Հայկական խազերու ուսումնասիրութիւնը մասնագէտների կողմանէ» յօդուածը, ուր քննուում է կոմիտաս Վարդապետի անտիպ ձեռագրերը գտնելու հարցը: «Բազմավէպ»ի յաջորդ՝ 1936ի թիւ 1-2 համարում հրապարակում է Հայր Տայեանի «Կոմիտաս Վարդապետ» ժաւալուն յօդուածը, (որն այսուհետեւ, «Կոմիտաս Վարդապետ» (Ուսումնասիրական տեսութիւն) խորագրով, իբրեւ առանձին մենագրութիւն 1936ին լոյս է տեսնում Միհիթարեան տպարանում (93 էջ): Հայր Տայեանն ընտրում է կենսագրական գրելու մի առանձնայատուկ՝ այդ շրջանի հրապարակումներից տարբերուող գրելատօն: Յօդուածի սկզբում «Ազգային սուզը» խորագիրը նկարագրում է Վարդապետի մահուան օրը, որը վշտի ու ցաւակցութեան օր է՝ համայն հայ ազգի համար:

Դրան յաջորդում են կոմիտասի «Խնճնակինսագրութիւնը», «Անտիպ նամակները», «Խուզարկու և հմայոր գրիչ» ու «Այց մը դեպի Վիլ Ժուիֆ», որտեղ Հայր Տայեանը ներկայացնում է 1930ին իր այցը Վիլ Ժուիֆ՝ տարաբախտ ու մեծ երգչին: Հայր Տայեանին ուղեկցում էր հայ առուանի ջութակահար, կոմիտասի երկրպագու Յարութիւն Սինանեանը: Վարդապետն այցելուներին պատասխանում է լուութեամբ, Հայր Տայեանի վրայ այդ սպասուած հանդիպումը ծանր հետք է թողնում:

«Բազմավէպ»ում հրապարակուած տայանական յօդուածի «Գեղգեղաղեթները» խորագիրը բացայացում է կոմիտասի ստեղծագործական կարեւորագոյն սկզբունքները. ներդաշնակելու եւ բազմաձայնելու վարպետութիւնը, Հայոց լեզուի զգացողութիւնը, որոնցով կոմիտասը «ապագայ սերունդների համար սեփական ուղի բացելով», դարձաւ հայ ազգային նուագահիւսական դպրոցի հիմնադիր: Յետագայ տարիներին, Հ. Ղեւոնդ Տայեանի ծրագրային նշանակութեամբ տեսակէտն, առ այն, որ «Մեր երգի օրէնք-

8 Երաժշտագէտ Հ. Ղեւոնդ Տայեան, «Էջմիածին», ԻԳ(1967), էջ 53-55: Տե՛ս նաև ՎԱՐԴԱՊԵՏԱԾԱԿՆԻ Ա., Աւշ միջնադարի հոգեւոր երաժշտութեամ Վեմետիկի դպրոցն ըստ հայր Ղեւոնդ Վրդ. Տայեանի Զայնագրեալ շարակացիցի, «Բազմավէպ», ՃԿԳ(2005), թիւ 1-4, էջ 379-388:

ները բացայացնել է կոմիտասը», իւրովի զարդացրին բազմաթիւ հայ երաժշտագէտներ ու նուազահիւսներ:

Անտարակոյս, Կոմիտաս Վարդապետի ստեղծագործական սկզբունքների ու տեսական դրոյթների համակարգը ժամանակի մէջ դարձան օրէնք ու չափանիշ՝ ազգային նուազահիւսական մտածողութեան հիմք: «Մեր երգի օրէնքները բացայացնել է կոմիտասը, գրում է նուազահիւս Տիգրան Մանսորեանը, - մենք չունենք այդ երգերի բնուրինը և հաստատող օրէնքներ ու օրինաշափուրիններ, չունենք այդ երգի ինքնուրացնուրեան վկայականը: Այդ վկայականը մեր երգին տուեց կոմիտասը»⁹:

Յօդուածում, Հայր Տայեանը կանգ է առնում կոմիտասի բանահաւաքչական գործունէութեան, ինչպէս նաեւ հրապարակուած երաժշտա-տեսական աշխատութիւնների վրայ: «Մափերու լեզուն» վերնագրի տակ, Տայեանն, առաջին անգամ, մէկտեղուած ներկայացնում է Վարդապետի ելոյթ-դասախոսութիւններն ու համերգներն՝ ըստ ժամանակագրութեան: Հայր Տայեանը բարձրաձայնում է այսօր էլ կոմիտասագիտութեանը յուզող բազմաթիւ կնճռու հարցեր, կապուած մասնաւորապէս կոմիտասի ինամատար յանձնաժողովի գործունէութեան, կորսուած ձեռագրերի, խազբանական աշխատանքների, Պատարագի տարբերակների հետ: Նա «Արդարութեան պարտք», է համարում մասունքների պէս հաւաքել կոմիտասեան ձեռագիրները: Հ. Ղեւոնդ Տայեանը դիտարկելով կոմիտաս Վարդապետի բազմաթեղուն գործունէութեան բնագաւառոները, իր ժամանակների համար, համարձակ ու արժանի գնահատանքն է տալիս կոմիտասեան ժառանգութեանը: «Արդի Հայ երաժշտական Գրականուրիւն, - գրում է Հայր Տայեանը, - չ'անցիւտանար արդէն, թէ որքան բազմակողմանի է կոմիտաս Վ.-ի մեծուրիւնը զանազան մարզերու: Անիլաւ հաւաքիչ եւ մըշակող հայ գեղջուկ եւ եկեղեցական երաժշտութեան, կազմակերպիչ է եւ դեկալար համերգներու, ազգագրագէտ է, օրէնդիր է, ուսուցիչ է եւ երգահան, ինքնասիպ դաշնաւորող է եւ հիմնադիր իւրայատուի բազմաձայնի, հեախոյզ է եւ տեսարան հայ խազափիութեան, բանախօս է եւ երգիչ՝ միջազգային վայրերու մէջ, հմուտ է զանազան նուազարաններու եւ այս ամէնուն հետ՝ եւ նրարուեստ երազագիր ձայնագրող»¹⁰:

9 «Գրական թերթ», 1969, 24 Հոկտեմբեր:

10 «Բազմավեպ», ԴԴ(1936), թիւ 1-2, էջ 23:

Կոմիտաս Վարդապետի եւ Հ. Ղեւոնդ Տայեանի նամակագրութիւնից պահպանուել է Վարդապետի կողմից գրուած երկու նամակ, երկուսն էլ առաջին անգամ հրապարակուել են «Բազմավեպ»ում:

1909ին, էջմիածնից Կոմիտասը նամակ է յղում Հ. Տայեանին, որտեղ շնորհակալութիւն է յայտնում ջերմ ու սրտաբուխ խօսքերի համար, ու ներկայացնում իր հրապարակուած աշխատութիւնների ցանկը:

Այս նամակում Վարդապետն, առաջին անգամ, խօսում է Հայկական Պատարագի իր «օօօր տեսակ դաշնակումների» մասին, որոնք դեռ հրատարակուած չեն: Առաջին անգամ տեղեկութիւն այդ հոյակերտ երկի վերաբերեալ մենք կարդում ենք «Բազմավեպ»ում: Տայեանն այս տեղեկութիւնն, իրաւամբ, համարում է կարեւոր՝ «Հեղինակաւոր յայտնութիւն»: Պատարագի ուսումնասիրման աշխատանքներում, Կոմիտասի երկերի Ակադեմիական հրատարակութեան մէջ կոմիտասագէտ Ռոբերտ Աթայեանը հետամուտ է եղել Տայեանի տեղեկութիւնների յայտնաբերմանը¹¹:

Ցաջորդ նամակը, որ Հայր Տայեանի կորսուած նամակի պատասխանն է, Վարդապետը, նոյնպէս գրում է էջմիածնից, 1909ին, այս նամակը «Սրտի անենուն բերկրութեամբ» ջերմ ու սրտալից գրութիւն է: Զմոռանանք, որ 1909ը Վարդապետի գիտական կենսագրութեան մուալլ Մըջաններից է: Նոյն թուին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս իզմիրլեանին հասցէադրած նամակը, Վարդապետի անձուկ հոգեվիճակը ներկայացնող փաստաթուղթ է¹²:

Հեղինակաւոր երաժշտի ու մտաւորականի՝ ինչպիսին էր Հայր Տայեանը, գնահատականը, առաւել քան կարեւոր էր Կոմիտաս Վարդապետի համար: «Սրտագին շնորհակալութիւնս, - գրում է Կոմիտասը, - եղանայր պատուական, Զեր անկեղծ եւ սիրալիր զգացմանց համար: Զեր խրախոյններն ինձ եռանդ ևն ներշնչաւմ եւ ոգեստրութիւն առքում. մի բան, որ այնքան ֆիչ են հասկանում եւ գնահատում մեզանում»¹³:

1915ի աքսորի ժամանակ, երբ Կոմիտաս Վարդապետը թրքական բանտում երգում էր «Տէր ողորմեա»ն, աքսորակից բը-

11 ԿՈՄԻՏԱՍՍ, Երկերի ժողովածու, հ. 8, Երեւան 1998, էջ 11:

12 ԿՈՄԻՏԱՍՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ, նամականի, Երեւան 2009, էջ 166:

13 Անդ, էջ 153:

Ժըշկապետ Վահրամ Թորդոմեանը հարցնում է Վարդապետին, թէ հայոց մէջ ով կայ իրեն հետեւող: Կոմիտաս Վարդապետը պատասխանում է. «Վենետիկի մէջ կայ Հ. Ղեւոնիքը, սոխակի ձայն ունի, կը սիրէ երաժշտութիւնը, նա կարող է մեծ երաժշտ մը ըլլալ եւ Ս. Ղազարի հանդարտ մբնոլորտին մէջ մշակել հայկական երաժշտութիւնը»¹⁴.

Իր հերթին, Վարդապետի ազգանուէր գործունէութիւնը, Հայոց Տայեանը համեմատում էր Հ. Ղեւոնդ Ալիշանի հետ, ով մասունքի պէս էր հաւաքում ազգին պիտանի նիւթը, ում համար «Ամէն ինչ Հայաստանի եւ Հայրենիքի համար» պատգամը սրբազն պարտք էր:

Փարիզի Հայ ուսանողական միութեան համար Ֆրանսիացի երաժշտագէտ, միջնադարագէտ Ամետէ Կաստուէի հայ երաժշտական արուեստի պատմութեանն ու Կոմիտասին նուիրուած բանախօսութիւնը՝ հրապարակում է «Քազմավէպ»ի 1932 թուականի 6-7 համարներում: Այն տեղեկութիւն է տալիս օտարազգի երաժշտագէտի՝ հայ արուեստի մասին ունեցած արժէքաւոր գնահատականների մասին: Նոյն թուի 10-11 համարում Գրական քրոնիկոն բաժնում Կոմիտասի մասին խմբագրական անդրադարձ է զետեղում «Հայ նշանաւոր կոմպոնուոր» խորագրով:

«Քազմավէպ» հանդէսի 1999ի 1-4 համարում նիկողայոս Թահմիգեանը հրապարակում է «Բարդ խազաւորումների երրորդ կարգը» յօդուածը, որտեղ Հեղինակի կողմից նաեւ դիտարկում է Կոմիտասի հայոց առողջանական համակարգի հանդէալ ունեցած մօտեցումները (էջ 66):¹⁵

Համակարծիք լինելով գիտականի հետ, այսօր էլ արձանագրում ենք. Կոմիտասն է մասնագիտորէն ուսումնասիրել, հետազոտել ու բացայացել հայկական հոգեւոր ասերգի իւրայատկութիւնները: Կոմիտասը գիտականօրէն նկարագրել է գործնականօրէն կիրառուող առողջանական նշանների ամբողջութիւնը: Եւ 1914ին Փարիզում Միջազգային երաժշտագիտական համաժողովում Կոմիտաս Վարդապետի «Հայոց առողջանութեան նշանների համակարգին» նուիրուած ֆրանսերէն զեկոյցը հիացմունք է պատճառել ոլորտի լաւագոյն մասնագէտներին:

14 «Քազմավէպ», Ճ-Դ(1956), թիւ 12, էջ 282:

15 Բարդ խազաւորումների երկրորդ կարգը, «Քազմավէպ», Ճ-Ծ(1997), թիւ 1-4, էջ 115-132: Տե՛ս նաև «Քազմավէպ», Ճ-Ծ(1999), թիւ 1-4, էջ 63-80:

Յատուկ «Բազմավեպ»ին է ուղարկւում, եւ հանդէսի այդ շրջանի խմբագիր Հայր Եղիա Փէչիկեանի կողմից 1936 թուականի 3-7 համարում Հրապարակւում է Թորոս Ազատեանի յայտնաբերած եւ «Բազմավեպ»ին փոխանցած Կոմիտասի տաղեր պարունակող երկու ինքնագիրները. «Երկու պատառիկներ Կոմիտաս Վարդապետէն»։

Կոմիտաս Վարդապետին նուիրուած մասնագիտական բարձր մակարդակով, խոնարհումով գրուած «Բազմավեպ»ի յօդուածները, Կոմիտասի կեանքն ու գործունէութիւնը լուսաբանող իւրաքանչիւր տեղեկութիւն դարձնում են առանձնայատուկ, եւ ասես առաւել հայեցի։

Հիայոյս ենք, որ առաջիկայում կունենանք նոր՝ Կոմիտասի բնորոշմամբ «Խրախոյս եւ եռանդ ներշնչող» հրապարակումներ. Քանզի, այսօր էլ Գիտելեաց շտեմարան, հայ մամուլի նահապետ «Բազմավեպ»ը տօնելով իր 175ամեակը շարունակում է ազգակառոյց գործունէութիւնը՝ մնալով հայոց կրօնի, մշակոյթի եւ գիտական մտքի տարածման խորհրդանիշ։

ԼՈՒՍԻՆԸ ՍԱՀԱԿԵԱՆ

Summary

KOMITAS VARDAPET ON THE PAGES OF "BAZMAVEP"

LUSINE SAHAKYAN

It is well-known that Komitas Vardapet's creative and musical activities were covered in contemporary periodicals of the time; those publications have a valid documentary value in the current stage of Komitas studies. The "Bazmavep" could not keep from expressing its appreciation to Komitas.

The study is devoted to the publications of Armenian and foreign renowned musicologists in various issues of the "Bazmavep", which contain valuable facts about Komitas Vardapet. The following articles written by Vardapet's contemporaries have been highlighted and studied: "Armenian Music in Venice" by Father Garabed Der-Sahagian, the editor of the academic journal "Bazmavep", "Komitas Vardapet" by Father Ghevond Tayan, another editor of the "Bazmavep", a member of the Mekhitarist Congregation, musicologist, an expert in spiritual music, as well as several articles by Amédée Gastoué and Father Yeghia Pechighian. The study encompasses not only articles, but also essays and poems written about Vardapet.